№ 165 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 19

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է՝ ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 19 № 165

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շուշու աղէտալի անցքերը. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մայրենի լեզուն տարրական դպրոցներում. Նամակ Վաղարշապատից. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Սուրմալուի գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկու մահ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՇՈՒՇՈՒ ԱՂԵՏԱԼԻ ԱՆՑՔԵՐԸ

—

Շուշի քաղաքում կատարվող սոսկալի դէպքերը մեծ մտատանջութիւն են պատճառում մեր հասարակութեան։ Յուզմունքը դեռ չէ դադարել մինչև այժմ։

Թէ վարչական անձեր և թէ ժողովրդի ներկայացուցիչներ փորձում են կանգնեցնել ընդհարումները, բայց ամբոխը դեռ չէ հանգստանում։

Գանձակի փոխ-նահանգապետ Բարանովսկիյ, որ ճանաչվել է դէպի Շուշի, ամսի 17-ին երեկոյեան հասաւ Շուշու մօտերքը։ Սաստիկ հրաձգութեան պատճառով նա զերադասեց մնալ քաղաքը հետեւեալ օրը, ամսի 18-ին, վաղ առաւօտեան։ Նա ունի իր հետ կօզակների մի փոքր վաշտ։

Շուշու շրջակայքում տիրում է մեծ վրդովմունք, բայց լուրջ ընդհարումների մասին դեռ տեղեկութիւններ չը կան։ Լուրեր էին տարածվել, որ իբր թէ հրդեհին են մատնվել օղիի գործարանները, բայց այդ լուրերը չեն ճշդված և մասնաւոր լուրերին նայած օղիի գործարանները առայժմ անվնաս են մնացել։ Գաւառի օղիի գործարանների ներկայացուցիչները դիմել էին ակցիզային գլխաւոր կառավարիչ Պերշկէին, խնդրելով սրա միջնորդութիւնը պաշտպանելու գործարանները հրդեհից և կողոպուտից։ Պերշկէն դիմել էր իր կողմից Փոխարքայի օգնականին, որը խոստացել էր ձեռք առնել բոլոր պաշտպանողական միջոցները։ Գործարանների ներկայացուցիչները իրանք ևս դիմում արին անձամբ Փոխարքայի օգնականին։

Շուշու մէջ տեղի ունեցող եղելութիւնների մասին տեղեկութիւնները լիակատար չեն։ Շատերը անկարող են փողոց դուրս դալ և հաշուել եղած զոհերի թիւը։ Մեր թղթակիցները աշխատում են կարելիին չափ ղգոյշ և չափաւոր տեղեկութիւն տալ, խուսափելով չափազանցութիւններից։ Վերջին մեր ստացած լուրերը ցոյց են տալիս, որ քաղաքի մի քանի տեղերում հրդեհված են տներ ու մի քանի հեռագրական սիւներ։ Պոստային հաղորդակցութիւնը ընդհատված է։

Զօրքը ներգործական դեր է կատարում և աշխատում է վերջ դնել կոտորածին։ Զինուորներից մի քանիսը վնասվել են, փոխ-նահանգապետի երեւալը քաղաքում յոյս է տալիս, որ քաղաքացիներին կաջողվի դադարեցնել ընդհարումը։ Թուրք ամբոխը ըստ երեւոյթին ստիպված է զէնքը վայր դնել։ Շատ ցանկալի է, որ ազդեցիկ մարդիկ մէջ մտնէին և դադարեցնէին ընդհարումները։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Շուշի, ստացանք հետեւեալ հեռագիրները 17-ին, կէսօրից յետոյ 3 ժամ 11 րոպէին։

«Այսօր սաստիկ հրաձգութիւնը շարունակվում է։ Թուրքերի տները Երևանեան Դրան մօտ այրվում են։ Շատ թուրքեր ապաստան գտան զօրանոցում։ Նշանաւոր թուրքեր ցանկութիւն յայտնեցին հաշտվել, բայց թուրք խուժանը մահվան ըսպասնալիքով չը թոյլ տուեց տեսակցել հայերի հետ։ Սպանված են 1 կօզակ և մէկ զինուոր, վիրաւորված են 2 հոգի։ Հայ կամաւորները և կօզակները աջողութեամբ պաշտպանում են քաղաքը։ Այժմ այրվում մի հայի տուն։ Հայերը թուրք վիրաւորներին փոխադրում են հիւանդանոց և աշխատում են նրանց հեռա լաւ վարվել։

—

Շուշի, օգոստոսի 18-ին, առ. 6 ժամին.

«Դրութիւնը դեռ ևս շատ երկիւղալի է։ Զինուորների և թուրքերի միջև եղած հրացանաձգութեան ժամանակ սպանվեցին 11 զինուոր, իսկ թուրքեր 85 հոգի։ Թուրք վիրաւորների թիւը դեռ ևս որոշված չէ։ Հայերից սպանված են 10, իսկ վիրաւորված են 20 մարդ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

I

Գաղափարներն ու սկզբունքներն ունեն իրանց պատմութիւնը։ Անհատի նման նրանք էլ ծնունդ են առնում, աստիճանաբար զարգանում, մերթ հալածանքի ենթարկվում, մերթ յաղթանակ տանում։

Ռուսատանում վաղուց, շատ վաղուց յայտնի էր մանկավարժական այն սկզբունքը, որ մանուկներին պէտք է առաջին գիտելիքները հաղորդել մայրենի լեզուով, որ մայրենի լեզուի օգնութեամբ պէտք է սովորեցնել թէ պետական և թէ օտար լեզուները։

Բայց ահա ծնունդ է առնում պետական անձերի գլուխներում մի հակասկզբունք, նախընթացի հերքումը, նրա անտիթէզը։ Դա մանկավարժական սկզբունք չէր, այլ քաղաքական. սակայն ծնունդ առնելով քաղաքական ծուռ ու սխալ հաշիւներից, 60—70 տարի շարունակ նա ատրկացրեց, ծառայ դարձրեց իրան մանկավարժութիւնը։

Այդ նոր սկզբունքը թաղնված էր հետեւեալ երկու բառերի մէջ. «պէտք է ռուսացնել»։

Ազգերի գոյութեան կատաղի կռուում սովորական երևոյթ է մրցումը։ Ինչպէս կենդանական աշխարհում ուժեղ տեսակները կլանում, ճուլում, սպանում են թոյլերին կամ նրանց ուղղակի ուտում, այնպէս էլ ազգերի գոյութեան կռուում մէկը միշտ ձգտում է կլանել միւսին, նրան իր մէջ ճուլել, իրը զօրացնել, ուրիշներինը թուլացնել։

Այդ ձգտումը, երբ նա արտայայտվում է կոպիտ, անասնական ու բռնի միջոցների ձևով, կոչվում է շովինիզմ, ազգամոլութիւն, իսկ երբ նա երևում է իրը կուլտուրական մրցում, առանց բռնութեան, կամաւոր ու անզգալի միացման ուղիով, նա կրում է կուլտուրական ազդեցութեան արտայայտութիւն։ Առաջինը դատապարտելի է, երկրորդը յարգելի։

Մեզանում այդ ռուսացման գործողութիւնն արտայայտվեց առաջին ձևով։ Այդ արտայայտութիւնը երևան եկաւ մեզ, հայերիս ու կովկասցիներիս համար շատ ցաւալի ձևերով։ Պակաս կսկծեցուցիչ երևոյթներ տեղի չունեցան և երկրի միւս ծայրագաւառներում։

Մենք մի կողմ կը թողնենք այդ բոլոր կողմնակի երևոյթները և կը քննենք միմիայն լեզուի խնդիրը։

—

Մայրենի լեզուն, մինչև 1904—1905 ուսումնական տարին դուրս էր քշված մինիստրական այն դպրոցներից, ուր սաների մեծամասնութիւնը կամ բոլորը Ռուսաստանի այլացեղ քաղաքացիներ էին։ Ոչ հայը, ոչ վրացին, ոչ էլ թուրքը, մտնելով պետական դպրոց, հնարաւորութիւն չունէին ուսանելու իրանց մայրենի լեզուն։ Այդ լեզուն կամ բոլորովին արտաքսված էր դպրոցից, կամ լսվում էր միայն ու միայն կրօնի դասերին։ Իսկ կրօնի դասատուութիւնը յանձնվում էր այնպիսի ոգէտ ու քծնող անձերի, որոնք ոչ մի մանկավարժական պատրաստութիւն չունէին, որոնք իրանց պաշտօնը պահելու և դիրեկտորներին ու վարիչներին հաճոյանալու համար՝ նոյն իսկ այդ առարկան անցնում էին ռուսերէն լեզուով, կամ դասագիրք կազմում, օրինակ, հայերէն և վերջը մի բառարան կպչնում հայերէնից ռուսերէն...

Այդ ձևով աւանդված առարկան և այդպիսի ողորմելի անձերի միջոցով՝ ի հարկէ միայն զզուանք ու ծաղր էր առաջացնում սաների մէջ։ Նրանք արհամարհում էին թէ այդ առարկան, թէ նրա դասատուներին։

Թողնենք մի կողմ միջնակարգ դպրոցը և նայենք ժողովրդական մի և երկդասեան տարրական դպրոցների վրա։

Մտնում է, ասենք, մի ապարանցի կամ օղուրգէթցի երեխայ պետական դպրոց։ Նա ռուսերէն ոչ մի բառ չը գիտէ... Այդ քիչ է. նա կեանքի մէջ յաճախ նոյն իսկ ռուսի երես չէ տեսել։ Եւ այդ խղճուկին իսկոյն սկսում են «ռուսերէն կրթել»։ Ուսուցիչը, որը Էովկասի նախկին կառավարչապետի արժանայիշատակ վարչութեան օրով յաճախ կամ յոյն էր լինում, կամ ռուս, կամ վրացի հայերի մէջ, բոլորովին անտեղեակ էր տեղական լեզուին և չէր էլ ուզում սովորել, որովհետև նա «ուսուցիչ», մանկավարժ չէր, այլ դիպլոմատ, պոլիտիկոս։ Նա չէր գնում գիտելիքներ հաղորդելու, զարգացնելու իր սանիկներին ամենաբնական ու ճիշտ միջոցով, չէր գնում նրանց կրթելու բարոյական ուղիով, այլ նրա միակ հոգն էր այդ մանուկներին ռուսացնելը։

Եւ ուշը դարձրէք. նա չէր ուզում այդ մանուկներին այնպէս դաստիարակել, որ դառնային հայերէն կամ վրացերէն խօսող անկեղծ ռուսասատանցիներ, ազատ ռուս քաղաքացիներ՝ բայց ազգով հայ կամ վրացի—ոչ։ Նա գնում էր դրանց բնական, էտնոգրաֆիական ազգութիւնը ոչնչացնելու, լեզուով, կրօնով և նոյն իսկ սովորութիւններով ռուս դարձնելու նրանց։

Ինչ ասել կուզէ, որ այդ հիւանդ ու սխալ մէթոդը, խփվելով երկրի բնական պայմաններից ծնունդ առած ազգութեան գաղափարին, փշրվում, ծաղրելի էր դառնում։ Իսկ երբ դարնվում էր դարերի արդիւնք ազգային սովորութիւններին ու ազգային ոգուն, բռնութեան կերպարանք էր ընդունում։ Մանկավարժը դառնում էր հալածող, դահիճ ազգային հոգի գաղափարի։ և դրանից առաջանում էր ժողովրդի մէջ ատելութիւն թէ դէպի ռուսացնող ուսուցիչը, թէ դէպի նրա դպրոցը և թէ դէպի նրա աւանդած ռուսերէն գիրն ու դպրութիւնը։

Մանկավարժութիւնը ծառայ էր պոլիտիկային։ Եւ դա ծնեցրեց լեհացու, հայի, վրացու, լատիշի դժգոհութիւնը մինիստրական «պոլիտիկան» դպրոցներից։

—

Մտնում էր ուսուցիչը դասարան։ Նա պէտք է ծանօթանար իր բոլոր նորեկ սաների հետ։ Հարցնում էր անունը, ազգ անունը, հօր ու մօր, եղբայրների ու քոյրերի թիւը... Երեխան չէր հասկանում նրա լեզուն. ապուշի նման երեսին էր նայում, յաճախ միայն լալիս։

Եւ այդ օրվանից սկսվում էր մանուկի տանջանքը։ Նրա հետ խօսում, նրան պատժում, հարցնում էին մի լեզուով, որ ինքը չէր հասկանում...

Մանկավարժութեան ամենաղօրեղ ու անվիճելի սկզբունքներից մէկն է յայտնիից գընալ դէպի անյայտ, յայտնիի միջոցով անյայտը բացատրել, հեշտից կամ հասկանալիից գնալ դէպի անհասկանալին, մայրենիից դէպի օտարը։

Իսկ պետական տարրական դպրոցը դրա տրամագծօրէն հակառակն էր անում. անյայտից գալիս էին դէպի յայտնին, օտարից դէպի մայրենին, դժուարից ու անհնարիցից դէպի հեշտն ու հնարաւորը։

Դրա արդիւնքը լինում էր սաների բթացումը։ Մնում էին մանուկները տարիներով մի և նոյն դասարանում, փթում էին տարրական միդասեան դպրոցում, դառնում 16—17 տարեկան, հաղիւ մի կերպ դուրս էին պրծնում այդ պոլիտիկան դպրոցից... բայց տգէտ ու բթամիտ, անընդունակ շարունակելու դպրոցի տուած հատ ու կտոր տեղեկութիւնները, հիւանդ զարգացումը։

Երկդասեան և քաղաքային 3—4 դասարանեան դպրոցներում մինչև այժմ էլ լիքն են մօրուքաւոր պատանիներ... այն ինչ նրանք այդ դպրոցները պէտք է աւարտէին՝ ամենաշատը 14—16 տարեկան հասակում և պէտք է կարող լինէին մտնել միջնակարգ դպրոցների II, III կամ IV դասարանները։ Իսկ դա այժմեան դպրոցն անկարող է անել։

Սաները դուրս են գալիս և յաճախ նոյն իսկ գիւղական գրագիր լինել չեն կարողանում, որովհետև երկու բառ ռուսերէն անսխալ գրել չեն կարող, թէև 7—8—10 տարի մաշել են պետական «շկոլի» շեմքը։

—

Այժմ այդ սխալն ըմբռնել է կառավարութիւնը։

Մանկավարժութիւնն ուզում են ազատել պոլիտիկայի լծից. նրան ուզում են դարձնել միայն ու միայն զարգացման ու դաստիարակութեան գործիք։

Այդ նոր ուղղութիւնը միայն Կովկասում չէ, այլ և Լեհաստանում, Շուրջբալտեան նահանգներում և միւս այլազգի ժողովրդների դպրոցներում։

Մեզանում Փոխարքայի հրամանով տարրական դպրոցների մի քանի ուսուցիչներ—միայն հայ, վրացի և թուրք, ժողովի հրաւիրվեցին Թիֆլիսում և մշակեցին մի նոր ծրագիր, որը, ժողովականների կարծիքով, առողջ սկզբունքների վրա է դրված։

Մենք չենք քննում դեռ ևս այն հարցը, թէ որքան այդ անձերը ձեռնհաս էին այդպիսի մի խոշոր աշխատանքի։ Այստեղ մենք միայն այսքանը կասենք, որ այդ ուսուցիչները, որքան էլ նրանք անձեռնհաս լինէին ծրագրներ կազմելու, լիապէս ձեռնհաս էին այն հարցը լուծելու, որի վրա մենք կանգ առանք այս յօդուածում։

Մանկավարժութիւնը պոլիտիկայից պէտք է ազատել. մայրենի լեզուով միայն կարելի է առողջ ու խելացի, կենսունակ կրթութիւն տալ մանուկներին։ Դրանք այդպիսի դիւրըմբռնելի և սովորական ճշմարտութիւններ են, որոնց վերաբերմամբ ամեն մի գիւղական ուսուցիչ անգամ ձեռնհաս է լիապէս։

Այժմ անցնենք նրանց կազմած ծրագրի քննութեանը։

Խաժակ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

Օգոստոսի 15-ին

Այսօր առաւօտեան վաղարշապատցիք մի անսովոր շարժողութեան մէջ էին, բոլորի բերանից լսվում էր «Կաթողիկոսը գալիս է», կարծէք Կաթողիկոսն առաջին անգամն էր գալիս Վաղարշապատ։ Այո, իսկապէս առաջին անգամն էր գալիս—գալիս էր մի արդարադատութեան փառաւոր յաղթանակով։ Այն փողոցը, որով պէտք է անցնէր Վեհափառը, մաքրած, ջրված և գորգերով, կապերտներով ու դրօշակներով էր զարդարված։ Վանքի նախագաւթի դուռը զարդարված էր թարմ տերևներով և դրօշակներով, իսկ վերին մասում կախված էր Կաթողիկոսի մեծադիր նկարը, շրջապատված գոյնզգոյն ծաղկէ շղթայով։ Նախագաւթի դռնից մինչև Տրդատադուռն մէջ եղած սալահատակը ծածկված էր թարմ խոտով և ծաղիկներով, իսկ Տրդատադուռը շրջապատված էր ուռենու թարմ ոստերով։ Վաղարշապատի և շրջակայ գիւղերի երիտասարդութիւնը, նշանակութիւն չը տալով ամարային կիզիչ արեգակին, ամեն ցաւ ու հոգս մոռացած և ուրախութեան զգացմունքներով լցված՝ որը ձիով, որը ուռենու թարմ ոստերի մէջ կորած՝ կառքերով շտապում էին իրանց ծերունի Հայրապետին հանդիպելու Կարխուն կայարանում։ Մի խօսքով Վաղարշապատը իր շրջակայ գիւղերի հազարաւոր երկսեռ բազմութեան հետ միասին չը տեսնված ցնծու-

թեան և ուրախութեան փառաւոր տօն էր կատարում։

Ժամը 6-ի կէսն էր, երբ Մայր տաճարի զանգակը աւետեց Կաթողիկոսի մօտալուտ գալուստը։ Իսկոյն միաբանութիւնը զգեստաւորվեց ու խաչով, խաչվառով և կերոններով դուրս եկաւ մեծ դարպասը սուրբ Գրիգոր լուսաւորչու գահակալին ընդունելու։ Գիւղերից եկած զանազան տարազի երկսեռ հասարակութիւնը, խառնվելով տեղացիների հետ, անհամբեր սպասում էր Վեհին, բռնելով իր հաւատարիմ տեղը Վաղարշապատի հրապարակում, վանքի նախագաւթում և բակում։ Վերջապէս կառքը երևաց. ծփաց ժողովուրդը, հազարաւոր գլուխներ մերկացան ու խռնվեցին դէպի եկող կառքը, սրտի խորքից բղխած թափով «կենցէները» արձագանք գտան և կորան հինաւուրց մայրաքաղաքի և այժմ կանգուն մայր տաճարի պարիսպների մէջ։ Կառքից իջնելով Վեհափառը մտաւ ամպհովանու տակ հայրապետական շքով. ժողովրդի ուրախութեան, բուռն կենցէներով ու եկեղեցական թափորով իջաւ եկեղեցի, որտեղ աշակերտները երգեցին «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականը և սովորական աղօթքը կարդալուց յետոյ նոյն թափորով և ովսաննաներով գնաց վեհարան։

Երեկոյեան տաճարի բակում հրավառութիւն կար. ամբողջ բակը լուսաւորված էր հարիւրաւոր լապտերներով. ժողովուրդը կրկին խռնվեց և բակը հեռուհեռ կենդանութիւն ստացաւ։ Մի տեղ մերթ ընդ մերթ երգում էին ճեմարանի աշակերտները և մի խումբ օրիորդներ զանազան ժողովրդական և ազգային երգեր, մի ուրիշ տեղ տեղական զուռնաներով պարում էին «Ջահիլ-Ջուհուլները» հայկական զանազան պարեր։ Այսպէս մինչև ժամը 12-ը հասարակութիւնը զբօսնելով ու զուարճանալով ուրախ տրամադրութեան տակ ցրվեց իր տեղը, թողնելով ծերունի Հայրապետին խաղաղ հանգիստ առնելու։

Նամակս կնքելիս հաստատ աղբիւրից իմացայ, որ Սև Ջրի (Մեծամօր) մօտ շրջակայ թուրքերը դիմաւորել էին Վեհափառին աղ ու հացով. իսկ Վեհափառը օրհնելով նրանց՝ շարունակել է ճանապարհը։

Գ. Աղազադեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

Օգոստոսի 8-ին

Եկեղեցական կալուածների վերադարձման և ուսումնարանների բացման հեռագրալուրը լսելով էջմիածնից, երէկ, կիրակի, օգոստոսի 7-ին, տեղիս եկեղեցում նախ մաղթանք կատարվեց Կայսրի արևշատութեան համար և ապա հոգեհանգիստ՝ կալուածական խնդրի հետ կապ ունեցող հայ նահատակների յիշատակին։ Հասարակութիւնը վերին աստիճանի ուրախ տրամադրութիւն ունէր։ Քարոզ խօսեց գործակալ Արտակ վարդապետը, որից յետոյ օրվայ պատշաճի ճառեր արտասանեցին Լ. Ղորղանեան, Ա. Սինանեան և Ս. Յովհաննէսեան։ Հանդէսը տևեց երկու ժամից աւելի և ժողովուրդը անսահման ուրախութեամբ հեռացաւ եկեղեցու բակից, որտեղ 2 տարի առաջ այսօրվայ հակառակ տրամադրութիւն էր ցոյց տալիս...

Գաւառի դրութիւնն ընդհանրապէս խաղաղ է. լուրջ ընդհարումներ հայերի և թուրքերի մէջ տեղի չեն ունեցել։ Թէ և գաւառի քանի մի կէտերում տաւարի նախիրներ և ոչխարների հօտեր են քշել թուրքերն ու քրդերը, բայց այդ աւարները, քիչ բացառութեամբ, արդէն յետ են խլվել բշողներից, շնորհիւ Նոր-Բայազէտի գաւառապետ պ. Ս. Ղորղանեանցի։ Ափսոս միայն, որ մարդկային զոհեր եղան, մեր գաւառի Ղալբուլաղ գիւղի մօտերքը սպանվեցին 3 հոգի թուրքեր և մէկը վիրաւորվեց։ Այդ գիւղում ապրում են 170 ընտանիք թուրքեր, որոնց շրջակայքում գտնվում են 33 գիւղեր դարձեալ թուրք ազգաբնակութեամբ, իսկ այդ գիւղերի մօտերքից արդէն աստիճանաբար՝ զանազան հեռաւորութեամբ՝ սկսվում են հայերի գիւղերը, Սևանի ծովակի երկարութեամբ։ Վերոյիշեալ սպանվածները, լինելով Զիվանշիրի եայլաղաւորներ, բանակ են դրած եղել մեր գաւառի սահմանագլխում, ինչպէս սովորաբար եայլաղ են դուրս գալիս ամեն տարի։ Նրանք 4 հոգի սեփական գործերով լինելով գիւղերը՝ 3-ը նրանցից սպանվում են, իսկ չորրորդը վիրաւորվում է։ Սակայն տեղական թուրքերից զանազան մութ մարդիկ, մանաւանդ Ղզլ-բուլաղցի յայտնի Բէյուբ-աղա Շայխորսկին, ուզում են յանցանքը գցել հայերի վրա։ Բայց թէ ով է սպանել իսկապէս՝ թուրքերը թէ հայերը, դեռ ևս հաստատ չէ իմացվում, քանի որ վիրաւորը, ինչպէս պատմում են, ինչ-ինչ պատճառներից դրդված մի դրական ցուցումն չէ կարողանում տալ։ Բայց և այնպէս յուզմունքը ժողովրդի մէջ սաստկանում է, երբ մանաւանդ յիշեալ խռովարար Բէյուբ-աղան աշխատում է զանազան գրգռիչ լուրեր տարածել թուրքերի մէջ և ամեն կերպ լարել նրանց հայերի դէմ։ Սակայն հարևան մի քանի թուրք գիւղեր, որոնցում յայտնի է հեղինակաւոր Սամանդարա Բեասամանսկին, միշտ դէմ են եղել Բէյուբ-աղայի ծուռ մտադրութեանը, և հայերի հետ բարեկամ մնացել։

Այսպէս թէ այնպէս Բասարգէչար մեծ հայկական գիւղը, որ ընկած է հայ գիւղերի ծայրում, թուրք գիւղախմբերի դէմ, սաստիկ երկիւղի մէջ էր, մանաւանդ որ երկու թէ երեք անգամ քշել տարել էին այդ գիւղացիների անասունները։ Սակայն գաւառապետը հանգստացրեց նրանց, խոստանալով վերադարձնել անասունները, և ժողովրդի յուզմունքը դադարեց։ Բացի այդ վերը յիշած սպանվածներից, չարաչար կերպով—ոչխարի պէս վիզը կտրելով—սպանվեց նաև ղըրխ-բուլաղցի մի հայ—Աղաջան Ղազարեանցը, որին սպանում են ղզըլ-բուլաղցիները—յիշեալ Բէյուբ-աղայի մարդիկ։ Զը մոռանանք յիշել, որ Բէյուբ-աղան չը բաւականանալով իր խռովութիւնները սերմանել մեր գաւառի թուրքերի մէջ, նա աշխատում է նաև Զիվանշիրի թուրքերին ոտի կանգնեցնել հայերի վրա յարձակվելու և այլ խռովութիւններ սարքելու։ Բայց նա մասամբ հասնում է իր նպատակին, իր չար դիտաւորութեամբ, որ քշեցին մեր գաւառի անասունները մի քանի կէտերում։ Աւելացնենք նաև, որ դեռ նոպակս չը վերջացրած հաստատ լուր առայ, որ յիշեալ Բէյուբ-աղա Շայխորսկին արդէն բանտարկված է այստեղի բանտում։

Գ. Սինանեան

ՆԱՄԱԿ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՒԱՌԻՑ

Դաշբուրան, օգոստոսի 8-ին

Օգոստոսի 5-ին Դաշբուրունցի Մկրտիչ Աստուրեանի ֆուրգօնը, Էջմիածին կայարանից վերադառնալիս, մեր հարևան Կաջարթոխանշալու գիւղի մօտ երկու թողանշալեցիներ գալիս նստում են ֆուրգօնի մէջ։ Ֆուրգօնչուն ասում են, թէ դու չէս վախենում մենակ գնում ես. չէս իմանում, որ դուք մեղ հետ թշնամի էք։ Ֆուրգօնչին էլ ասում է, թէ ինչ կայ, որ վախենամ. մինչև հիմա այնպիսի բան չէ եղել մեր մէջ, և այսուհետև էլ չի լինի։ Այս ասելուն պէս յարձակվում են ֆուրգօնչու վրա, որ խէնջարներով սպանեն։ Բայց նա ֆուրգօնից իրան զցում է ցած, ու հաւաբ է կանչում։ Հաւաբի ձայնին օգնութեան է գալիս եռևից ձիով Յակոբ Աստուրեանը, ֆուրգօնի տէրը։ Թուրքերը տեսնում են, որ ֆուրգօնի տէրը եկաւ, ֆուրգօնչուն թողնում են ու փախչում։ Այդ դէպքը յայտնեցին պրիստաւին, նա էլ հրամայեց Դաշբուրանի տանուտէրին, որ այդ երկու չարագործներին որտեղ որ լինի գտնէ և բերէ անպատճառ։

Յուլիսի 20-ին Արալղի-Բաշքանդ թրքաբնակ գիւղում այնտեղի ուրեադնիկը մի քանի սարաժնիկների յետ բռնեց 40 հատ բամբակի բարդաներ և իսկոյն յայտնեց մեր գաւառապետին։ Գաւառապետը իր օգնական Շուսմովին ուղարկեց Արալղ, որ տեղեկանայ այնտեղի բամբակների մասին։ Շուսմօվն էլ քննեց և իմացաւ, որ բամբակը Նախիջևանից բերած աւարներից է, և բարդաների վրա գրված են տիրոջ անունը և մարկան։ Բամբակները Շուսմովը տուել է Արալղի տանուտէրին պահելու, մինչև գեներալ-նահանգապետ պրինց Նազալէօնի գալը, որը պէտք է օգոստոսի 9-ին լինի Իգդիր։

Ղամարլուի շրջանում հայերի և թուրքերի յարաբերութիւնները լարվում են։ Թուրքերը չեն ուզում թողնել գաղտագողի սպանութիւնների ձևը, որը կարող է նորանոր աղէտների պատճառ դառնալ։ Այս անգամ յարաբերութիւնների սրման պատճառը հետևեալն է։ Յուլիսի 22-ին Վերին-Դարղալու գիւղացի Յովնաթան քահանայ Տէր-Դաւթեանցը նոյն գիւղացի տանուտէրի օգնական Ալէքսան Մըխիթարեանի և մէկ ուրիշ գիւղացու հետ գընում են Նոր-Վիրապ վանքը և այլ ևս չեն վերադառնում։ Քահանայի և երկու գիւղացիների յետ չը դառնալու պատճառը, գիւղացիք ուզում են իմանալ։ Շատ ման են գալիս, բայց ոչինչ չեն գտնում։ Յետոյ պատահում են մի թուրքի, որը Քիչիկ-Վէդից է լինում. նա է պատմում հայերին թէ իզուր տեղ մի չարչարվէք, ձեր մարդկանցը մեր գիւղացիքն են սպանել։ Թուրքի ասելով, տէրտէրը և երկու գիւղացիքը վանքից յետ դառնալու ժամանակ Քիչիկ-Վէդի թուրքերը կանչում են հիւր։ Սրանք էլ չեն մերժում և գնում են։ Թուրքերը հիւրասիրելու փոխանակ, երեքին էլ անասելի չարչարանքով սպանում են ու դիակները գցում Արաքսը։ Դարղալուեցիք այս բանը յայտնում են պրիստաւին. նա էլ մի քանի մարդկանց հետ գնում է Քիչիկ-Վէդի և մի թուրքի տան մէջ, յատակի վրա գտնում են արեան հետքեր։ Տանտէրը այն օրվանից բանտարկված է։

Երևանի նահանգում միակ մեր Սուրմալուն էր խաղաղ մնացել, ուր այս քանի օրերս սկսել են գաղտագողի սպանութիւններ։

Օգոստոսի 7-ին, Իգդիրի շրջանի Կղլաբուլու գիւղացի Մարտիրոսին օրը ցերեկով իր սեխաստանի մէջ վիրաւորեցին բերդանի հրացանով Մալաքլու գիւղի թուրքերը։ Հրացանի ձայնին գիւղացիք գնում են օգնութեան։ Թուրքերը տեսնում են, որ գիւղացիք եկան, թողնում են վիրաւորին ու փախչում, իսկ վիրաւորին կիսակենդան բերում են գիւղ։ Երեկոյեան Իգդիրից քննիչը գնացել էր գիւղ, վիրաւորին հարցրել էր, թէ ո՞վ խփեց քեզ. նա էլ պատասխանում է. մալաքլուեցի երկու թուրք։ Քննիչը ցոյց տուած թուրքերին բանտարկեց։ Բայց Մարտիրոսը մի օրից յետոյ մեռաւ, որովհետև վէրքը ծանր էր։ Այս դէպքից երկու օր յետոյ, Ջրաղացում գիշերը սպանեցին 3 մալաքլուեցու. սպանողները յայտնի չեն. իսկ թուրքերը գցում են այս սպանութիւնը Ջրաղացին մօտ փանիկցի հայերի վրա, որպէս թէ հայերը Մարտիրոսի վրէժ են լուծել։

Ե. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Փոխարքայի դիւանատան մէջ նշանակած այն խորհրդակցութիւնը, դպրոցական ծրագիրների քննութեան մասին, որ նշանակված էր վաղը, շաբաթ, օգոստոսի 20-ին, յետաձգված է մինչև առաջիկայ չորեքշաբթի օր օգոստոսի 24-ը։

Անիի պեղումները ընդարձակելու համար ստացանք. 1) Մի խումբ երիտասարդներից Գ. Միրզայեանի ձեռքով հաւաքած 5 ր., Ախալցխայից մի խումբ տիկիններից և օրիորդներից հաւաքած 70 ր. 35 կ., 3) Բագուի հայ ուսուցիչներից հաւաքած 102 ր.։ Ընդհանուր գումարը, նախկին ստացածների հետ միասին 490 ր. 35 կոպէկ։

Մեր նախորդ համարներից մէկում Կ. Գոլսի լրագրներից քաղելով առաջ էինք բերել Եթովպիայի այցելու հոգևոր հովիւ Մկրտիչ քահանայ Զէյդանեանի գտած սիրալիր ընդունելութիւնը Մենելիք կայսրի և Եթովպական այլ պաշտօնատար բարձր անձերի կողմից։ Այժմ նոյն լրագրները հաղորդում են, որ Զէյդանեան քահանան, վերջերս, նորից ընդունվել է Մենելիք կայսրից արժանաւոր յարգանքով և արարողութեամբ։ Մենելիք կայսրը ի նշան այն համակրութեան, որ տածում է դէպի հայ Ազգն ու Եկեղեցին՝ Եթովպական պատուանշանի առաջին աստիճանը նուիրել է Կ. Գոլսի պարիսպը Մաղաքիա Օրմանեանին, նոյն պատուանշանի երկրորդ աստիճանը՝ Եգիպտոսի ազգայիններից Բարթող փաշային, որ Հաբէշստանի կայսրին նուէրներ էր ուղարկել, իսկ Զէյդանեան քահանային ընծայել է նոյն պատուանշանի երկրորդ աստիճանը և մի գեղեցիկ խաչ։

Մեզ հաղորդում են հետևեալը. «Ամսիս 16-ին, երեկոյեան ժամի 10-ին մի ֆուրգօն լցված 12—13 հոգով՝ ուխտաւորներով, որ վերադառնալիս են լինում Ծինծղաբերդի Աստուածածնից, ընկնում է մօտ 3 սաժէն ուղղահայեաց խորութեան մէջ, ջարդելով իր մէջ գտնվողներին։ Ասում են 4 հոգի տեղն ու տեղը մեռնում են, իսկ 3 հոգի հիւանդանոց տանելու ճանապարհին են վախճանվում, իսկ մնացածներից շատերը ծանր վիրաւորված են։ Վերջին անձրևները նահանգական բանտի դիմաց գտնվող կամուրջը (որ նախկին Երևանեան խաւուղումն է) քանդել են և մօտ 4 սաժէնանոց ուղղահայեաց խորութիւն կազմել։ Այս մասին ոստիկանութիւնը յայտնում է իր ժամանակին խաւուղու վարչութեան, որի վերահսկիչը ճանապարհը փակում է, տնկելով ճանապարհի լայնութեամբ սիւներ։ Պատմում էին, որ բերդի ջրկիրը երբ փակ ճանապարհի միջի սիւներից մէնը հանելով՝ օգտվել է ճանապարհի այն մասով, որ մնացել էր աւերումից (մօտ 2½ արշին լայնութիւն) և այնպէս էլ թողել է. մանաւանդ ճանապարհային վարչութիւնը լապտեր չէ կանգնեցնում, ինչպէս ընդունված է. (անպատճառ փչացած ճանապարհները գունաւոր լապտեր պիտի ունենան) գերմանացի ֆուրգօնչին էլ անտեղեակ ճանապարհի դրութեան, քշում է ձիաներին, որ յամառաբար անդունդի առաջ կանգնած առաջ չեն շարժվելիս լինում և մի խիստ հարուածից յետոյ վերև յիշած զոհերը տալիս ինքն էլ նրանց հետ վիրաւորվելով։ Դժբաղդութեան տեղը գնացել է իշխանութիւնը և նայել»։

—

Կովկասի Փոխարքայի դիւանը յանձնել է Թիֆլիսի նահանգապետին 1864 թ-ի յունվարի 1-ի զեմստվային օրէնսդրութեան հայերէն թարգմանութիւնից (թարգմանութիւն և հրատարակութիւն «Մշակի») 400 օրինակ, ցրելու գաւառի հայերի մէջ։

—

Զեմստվային հաստատութիւններ Կովկաս մտցնելու հարցը քննելու համար կազմվելիք ժողովների պատգամաւորների ընտրութիւնները Թիֆլիսի գաւառում նշանակված են օգոստոսի 26-ին։

—

Օգոստոսի 20-ին, շաբաթ օրը Կովկասի Փոխարքայի խորհրդում քննութեան է ենթարկվելու տարրական դպրոցի ուսուցիչների մշակած այն ծրագիրը, որ զետեղված էր «Մշակ»-ի երէկվայ համարում։

—

Օգոստոսի 12-ի ուրբաթ օրից, Նիժնի-Նովգորոդում սկսվում են Ռուսաստանում այժմ թոյլատրված մահմեդական-առաջադիմականների պարապմունքների առաջին համագումար ժողովը։ Համագումարի պարապմունքների ծրագրի մէջ մտցրված են շատ հետաքրքիր հարցեր։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մտադրութիւն կայ ընդհանուր ներում հրատարակել այնպէս, որ նա ընկնի ռուս-եապօնական խաղաղութեան դաշնագիրը քննվելու ուրախարիթ լուրերի հետ։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, ինչպէս լսել է «Русь»-ը, արդէն մշակել է ժողովների և հաւաքումների մասին օրինագիծ։ Նախագիծը թոյլ է տալիս այդ ժողովները կազմել միայն իմաց տալով վարչութեան, բայց միաժամանակ և բոլոր ժողովները, սակաւամարդ թէ բազմամարդ՝ դնում է ոստիկանական գործակալների հսկողութեան տակ։ Գործակալները պէտք է ներկայ լինեն ժողովներին։ Լրագիրները հաղորդում են, որ արդարադատութեան մինիստրութիւնը խոշոր ընդդիմախօսութիւններ է ներկայացրել ներքին գործերի մինիստրութեան այդ ծրագրի դէմ. այդ պատճառով յիշված ծրագիրը կենթարկվի որոշ փոփոխութիւնների։

—

Ծովապետ Նեբոգատովի էսկադրայի բոլոր ֆլեյտերները, որոնք Ցուսիմայի ճակատամարտում անձնատուր եղան, պէտք է պաշտօնից արձակվեն։

—

Անգլիական «Daily News» լրագիրը ձեռնարկել է «Եապօնիա և Ռուսաստան» անունով մի պատկերազարդ շաբաթաթերթի հրատարակման՝ ռուսերէն լեզուով։ Ծրագրութիւնն այդ նոր հրատարակութեան նպատակը բացատրում է այսպէս. Ջանալ որքան կարելի է արագ ծանոթացնել իրար երկու թշնամի երկիրներին—Եապօնիային և Ռուսաստանին։ Շաբաթաթերթը տարածվում է Եապօնիայում գերի ընկած զինուորականների մէջ և նրանց ընթերցանութեան գեղեցիկ նիւթ է տալիս։ Թէ հրատարակութեան բովանդակութիւնը և թէ արտաքինը շատ գեղեցիկ է։

—

Ստացանք հետևեալ նոր գրքերը. 1) Ի. Բելոկօնսկի «Ինքնավարութիւն և Զեմստվո», թարգմ. Կ. Զալալեանի, հրատարակութիւն Գ. Գալստեանի, տպագրված Թիֆլիսում, գինը 15 կոպէկ։ 2) Հաշիւ Երևանի Ս. Գրիգոր եկեղեցու։

—

Օգոստոսի 11-ին Պետերբուրգի նահանգական դատարանի շէնքից փախել ազատվել է քաղաքական յանցաւորներից մէկը, Դուբինին անունով։ Այդ փախուստի պարագաները շատ

զարմանալի ու տարօրինակ են։ Երկու զինուոր, սրերը մերկացրած, դատարանի երկար ու անժարդարնակ միջանցքով տանում են յանցաւորին քննիչի մօտ։ Սանդուխտների գլխին Դուբինինը խլում է զինուորներից մէկի սուրը, վերաւորում իր եւեից ընկածի թեւը և գլխաբաց փախչում աղատվում։

—

Նախիջեւանի աղէտի զոհերի օգտին ստացանք Սուրամում դրված մի լոտոյական երեկոյթից գոյացած 59 բուբլի։

—

Պարսկաստանի Ուրմիա քաղաքից յուլիսի 31-ից գրած մի մասնաւոր նամակից քաղում ենք հետեւեալը. «Նախիջեւանի դէպքերը այստեղի հայերի և պարսիկների մէջ իրարանցում առաջ բերին. թէ մէկ և թէ միւս կողմը շտապով սկսեցին զինվել Սալմաստում մինչև անգամ հայ կանայք զինվեցին։ Վախենում էին ոչ միայն հայերը, այլ և պարսիկները, որովհետև պարսիկների մէջ լուր տարածվեց, որ հայերը այնպիսի ռումբեր ունեն, որ իւրաքանչիւրը միանգամից սպանում է 100 մարդ։ Պարսից կառավարութիւնը շուտով դիմեց խելացի միջոցների. ի միջի այլոց նահանգապետը յայտարարեց, որ եթէ մի հայ սպանվի պարսիկից, մարդասպանի ամբողջ ընտանիքին կը կախէ և նրա ազգականներից կառնէ արեան գինը, որ նշանակում է Պարսկաստանում մի կտոր հացի կարօտ թողնել։ Երբ երկու ազգութիւնների մէջ յարաբերութիւնները լարվեցին, սրա մասին այստեղի հայերը հեռագրեցին Աստրպատականի գլխաւոր Մուշտէյիդին, նկարագրելով նոյնպէս իրանց և պարսիկների մէջ եղած նախկին բարեկամութիւնը։ Մի և նոյն օրը Մուշտէյիդը հեռագրեց այստեղի մոլլաներին, դիմել խիստ միջոցների խաղաղութիւն հաստատելու համար։ Մոլլաները ման էին գալիս փողոցներում, կաղմում էին խմբեր և քարոզում էին խաղաղութիւն, սակայն մինչև այժմ քրիստոնեաների թաղերը պահպանվում են զօրքերով»։

—

Տօմսկից հաղորդում են «С. От.» լրագրին, որ այնտեղի գերեզմանատունը մի փառաւոր արձան է կանգնեցրել տեղական ինտելիգենցիան յունվարի 18-ին փողոցում սպանված Կոնոնով ուսանողի գերեզմանի վրա։ Արձանի բացմանը ներկայ են եղել 2000-ից աւելի ինտելիգենտ անձեր և բանւորներ։

—

Բօրչալուի գաւառապետը զեկուցանում է Թիֆլիսի նահանգապետին, որ Բօրչալուի և Եկատերինենֆելդի գաւառակների հարաբերական բոլոր թուրքերը գտնվում են սարերում, իբր եայլաղաւորներ։ Նրանք այնտեղ վարում են թափառական, վրանաբնակ կեանք և չեն կազմում մի ամբողջ համայնք, որպէս զի կարողանան որ և է կանոնաւոր ընտրութիւն կատարել։ Գիւղական համայնքների մեծ մասը լեռներից վայր է իջնում օգոստոսի վերջերից ոչ շատ։ Այնպէս որ զեմստվային հաստատութիւնների հարցի վերաբերմամբ նախապատրաստական ժողովներ այդ գաւառում սեպտեմբերի մինչև կէսերը հազիւ կարելի լինի կազմակերպել։ Այն ինչ Գօրու և Թիօնէթի գաւառներում արդէն գիւղական համայնքներից պատգամաւորներ ընտրելու մասին կարգադրութիւններ են արված։

—

ՂՐԽ-ԲՈՒԼԱԽԻՑ (Նոր-Բայազէտ) մեզ գրում են. «Այսօր, յուլիսի 15-ին լուսաբացին անօրինակ գաղտնութեամբ թուրքերի ձեռքով սպանվեց մի ղրխ-բուլաղցի երիտասարդ՝ Ասլանի Սլոյեան, դաշտային աշխատանքի ժամանակ։ Դէպքը տեղի է ունենում հետեւեալ կերպով։ Վաղ առաւօտեան երբ պատրաստվում է Աղջանը տանից դուրս գնալ, շուրջը խմբված մարդիկ նախազգալով գալիք փորձանքը, խորհուրդ են տալիս նրան չը գնալ ասարկելով, որ թուրքերի յարաբերութիւնը հայերիս հետ ահա քանի օր է, խզված է, բացի դրանից շարունակ լուրեր ենք ստանում, որ այսօր կամ վաղը, թուրքերը յարձակվելու են մեր 3 գիւղերի վրա (Բասարգեչար և Թիւքիլու)։ Բայց նա ուշադրութիւն չէ դարձնում և ասելով թէ «Թուրքերը ըմմեն իմ աղ հացը կերել են, ինձ դանիշմիշ չեն լինի» (ինչ չեն տայ), մտրակում է ձին և գնում։ Անմիջապէս յետևից սայլով գնացող եղբայրը բերեց նրան հրացանով զարկված, վիզը կտրված, բազմաթիւ տեղերից դաշոյնով ծակծկած այլանդակված։ Սպանողները մօտակայ Զախրլու գիւղի թուրքերից են, որոնց ճանաչել են եղբայրը և նրա հետ եղած համագիւղացիները, բայց չարագործները դեռ ազատ են և շրջում են։ Սպանութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց փոքրիկ գիւղի մէջ և ամենքը մեծ թէ փոքր, ծեր թէ մանուկ, կին թէ աղջիկ հաւաքվելով դիակի շուրջը ողբում էին դժբախտ երիտասարդի մահը։ Դաշտում աշխատողներն ևս թողեցին իրանց աշխատանքը գիւղը լցվելով ահ ու դողով սպասում էին չարամիտների ծրագրած վայրագ խաղին։ Երեկոյը աւելի զօրացաւ, երբ նոյն օրը հարևան Զախրլու գիւղի թուրքերը օրը ցերեկով հնձեցին տարան գիւղացիների առւոյտի (եօնջայ) արտերը։ Ինչ անեն խեղճ գիւղացիները, շատ էլ քաջ ու անձնուրաց են, բայց կարող են մահակով կամ դաշոյնով գընդակի դէմ դուրս գալ։ Հէնց այս նոյն գիշերը քուրդ հովիւը հեւալով լուր բերեց, որ թուրքերը քշեցին տարան Ղրխ-Բուլախի 1000-ից աւելի ոչխարը։ Տարել են նաև Բասարգեչարի բազմաթիւ տաւարը և մեծ քանակութեամբ նաև ոչխարներ, 2000—3000։ Ղրրխ-Բուլաղի և Բասարքեչարի երիտասարդները մի տասնեակ կազակների օգնութեամբ գնացին, որ յետ բերեն»։

—

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳԻՒՂԻՑ (Լօռի) մեզ գրում են. «Մեր ծխական դպրոցները բանալու և եկեղեցական կալուածները վերադարձնելու աւետիքը մեր գիւղն էլ հասաւ։ Այսչս 14 ին մեր գիւղում այդ առիթով կատարվեց մի այնպիսի շքեղ հանդէս, որի նմանը մեր կողմերի գիւղերում գոյութիւն չէ ունեցել։ Այդ օրը գիւղի գլխաւոր փողոցները զարդարված էին թարմ կանաչով, ծաղիկներով և ծառերի դալար ճիւղերով։ Եկեղեցու բակում կանգնեցրած էր յաղթական կամար—դաշտային ծաղիկներից. եղևնու ճիւղերով հիւսված։ Կամարի վերևում բազմած երփներանգ ծաղիկներով զարդարված խաչը իր հովանու տակ էր առել Նորին Կայսերական Մեծութեան և Նորին Վեհափառութեան վէնզէլը։ Այդ օրը գիւղիս հասարակութիւնը առանց սեռի և հասակի խորութեան ներկայ էր պատարագին. ներկայ էր և մօտակայ Հօրարձի գիւղի ծխատէր քահանան իր ժողովրդով։ Իր ուրախութիւնը արտայայտելու համար շտապել էր այս ազգային հանդէսին ներկայ գտնվելու Ծերունի Գ. Խանդեանը իր ամբողջ ընտանիքով։ Պատարագից յետոյ եկեղեցու բակում կատարվեց կայսերական և հայրապետական մաղթանք, այլ և հոգեհանգիստ այն անձանց համար, որոնք կալուածքների գրաւման ժամանակ նահատակված էին։ Սրանից յետոյ մեր գիւղի Ե. ք. Զոհրաբեանց մի քարոզ խօսեց. բացատրեց մեր ազգային այս մեծ տօնի նշանակութիւնը. բարեմաղթութիւն արեց մեր ժողովրդի տխրութիւնը փարատող Կայսեր և Կայսերական տան համար, Վեհափառ Հայրիկի համար առողջութիւն և արեւշատութիւն խնդրեց. Կովկասի պայծառափայլ Փոխարքայի համար երկար օրեր մաղթեց և հայ ազգի ու եկեղեցու առաջադիմութիւնը ցանկացաւ։ Այդ բոլոր բարեմաղթութիւնների ժամանակ հանդիսականների միաձայն ուրանները և կեցցէները թնդացնում էին օդը։ Հանդէսից յետոյ գիւղացիք իրանց մորթած մատաղներով հիւրասիրեցին հիւրերին եկեղեցու բակում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ՄԱՀ

—

Օգոստոս ամսի 11-ին Գերմանիայի Դիսէն քաղաքում մեռաւ գերմանացի հռչակաւոր պատմաբան ուսուցչապետ Վիլհելմ Օնքէնը։ Ընդհանուր պատմական գիտութիւնը յանձին գիտնական Վ. Օնքէնի կորցնում է իր խոշոր ներկայացուցիչներից մէկին, որի արած գիտական ծառայութիւնը պատմութեան համար շատ մեծ արժէք ունի։

Վ. Օնքէնը ծնվել է 1838 թւի դեկտեմբերի 19-ին Հայդելբերգ քաղաքում։ Նրա կըրտսեր եղբայրն էր Շվէյցարիայի Բերն քաղաքի համալսարանի հռչակաւոր քաղաքատնտես Աւգուստ Օնքէնը, որ յայտնի է Ադամ Սմիդի, Մերքանտիլիզմի և ֆիզիոկրատների մասին գրած իր գիտական մի քանի ուսումնասիրութիւններով։

Վ. Օնքէնը միջնակարգ դպրոցը աւարտելուց յետոյ բարձրագոյն կրթութիւն է ստացել Հայդելբերգ, Գիօթինգէն և Բերլին քաղաքների համալսարաններում, որտեղ մասնագիտաբար սովորեց լեզուագիտութիւն, պատմութիւն և փիլիսոփայութիւն։

Համալսարանը աւարտելուց յետոյ Վ. Օնքէնը բոլորովին նուիրվեց պատմական ուսումնասիրութիւնների, որոնց նիւթերը իր գիտական գործունէութեան սկզբնական շրջանում վերցնում էր ընդհանուր պատմութեան հին դարից։ Նամանաւանդ պատմական գիտութեան տեսակէտից մեծ արժէք ունի նրա «Իզոկրատէս և Աթէնք» վերնագրով աշխատութիւնը, որ Վ. Օնքէնը ներկայացրեց Հայդելբերգի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտէտին պատմութեան համար պրիվատդոցենտի ատիճան ստանալու համար։ Նրա երկրորդ նշանաւոր գործը «Աթէնք և Յունաստան» վերնագրով աշխատութիւնն է, որ Յունաստանի ազգային և քաղաքական պատմութեան համար աչքի ընկնող ուսումնասիրութիւն է։

1866 թ. Վ. Օնքէնը պատմութեան ուսուցչապետի պաշտօն ստացաւ Հայդելբերգի համալսարանում, իսկ 1870 թ. նա հրաւիրվեց նոյն պաշտօնով Գիսէնի համալսարանը, որտեղ մնաց մինչև իր կեանքի վերջը։

Հէնց այդ մի և նոյն թուականին նա իրան նուիրում է նորագոյն ընդհանուր պատմութեան ուսումնասիրութեան, որի վերաբերմամբ նա տուել է մի քանի գիտնական տեսակէտից խոշոր աշխատութիւններ։ Դրանցից ամենանշանաւորներն են ա) Ֆրանսիական յեղափոխութեան պատմութիւնը բ) ռէֆորմացիայի պատմութիւնը և այլն։

Վ. Օնքէնի պատմական ուսումնասիրութիւնների մէջ, գլուխ գործոցը կազմում է «Allgemeine Geschichte in Einzeldarstellungen» (Ընդհանուր պատմութիւն առանձին նկարագրութիւններով) մի քանի հատորներից բաղկացած աշխատութիւնը, որ նա կազմել է 1878—1894 թ. ընթացքում՝ մօտ 30 մասնագէտ պատմաբանների աշխատակցութեամբ։ Դա ներկայացնում է պատմական բոլոր ազգերի պատմութեան ժողովածուն, որի մէջ Վ. Օնքէնը մասնակցել է իր «Ֆրիդրիխ Մեծի դարը» և «Յեղափոխութեան, կայսրութեան և ազատութեան կռիւների դարեշրջանը» պատմական ուսումնասիրութիւններով։

Վիլհելմ Օնքէնը յայտնի էր ոչ միայն իբրև պատմագէտ, այլ և իբրև իր ժամանակի քաղաքական նշանաւոր գործիչ։ Իր քաղաքական աշխարհայեցողութեամբ Վ. Օնքէնը դժբաղդաբար պատկանում էր գերմանական նացիոնալ-լիբերալների վերին աստիճանի չափաւոր քաղաքական կուսակցութեան, որի համար ազգայնական զգալի ցաւեր ունեցող մանր ազգերը ոչ մի նշանակութիւն չունին։ Նա իբրև Գիսէն քաղաքի ներկայացուցիչ մասնակցում էր Հէսսէնի պատգամաւորական ժողովին և գերմանական բայխստագին։

Երկրորդ զգալի կորուստը ունեցաւ համաշխարհային գիտութիւնը յանձին հռչակաւոր գիտնական Իւլիուս Օպպերտի, որ վախճանվեց 80 տարեկան հասակում սրանից մի քանի օր առաջ Ֆրանսիայի մայրաքաղաքում։ Ուսուցչապետ Իւլիուս Օպպերտը աշխարհիս բոլոր ասորագէտների սենիորն՝ նահապետն էր։ Ծագումով գերմանացի, ծնվել է Գերմանիայի Համբուրգ ազատ քաղաքում և մասնագիտական բարձրագոյն կրթութիւն է ստացել Հայդելբերգի, Բոնի և Բերլինի համալսարաններում։

Ի. Օպպերտը 1847 թւից ապրում էր Ֆրանսիայում և ֆրանսերէն լեզուով էլ հրատարակել է իր գլխաւոր աշխատութիւնները. չը նայելով իր գերմանական ծագումին, նա համարվում է ֆրանսիական գիտութեան գլխաւոր ներկայացուցիչներից մէկը։ Իր գործունէութիւնը Ի. Օպպերտը սկսեց իբրև գերմաներէն լեզուի ուսուցիչ Լավալի Լիցէօնում, իսկ յետոյ մի և նոյն պաշտօնով տեղափոխվեց Ռայմս քաղաքը։ 1851 թ. նա անցաւ գիտնական այն էկսպեդիցիայի գլուխը, որ գնում էր Հին Միջագէտքը հնագիտական և պատմական տեսակէտից ուսումնասիրելու։ Այդտեղից վերադառնալուց յետոյ նա նուիրվեց արևելեան լեզուների ուսումնասիրութեան, որից յետոյ նա իր ամբողջ կեանքը նուիրեց Ասորեստանի սեպաձև արձանագրութիւնների ընթերցման բանալին գտնելուն։

Նրա գլխաւոր աշխատութիւնները հետևեալներն են. ա) «Միջագէտք ուղարկված գիտնական էկսպեդիցիայի նկարագրութիւնը», բ) «Ասորական պալատի սեպաձև արձանագրութեան ընթերցումը», գ) «Ասորեստանեան ուսումնասիրութիւններ», դ) «Ասորեստանեան քերականութիւն» և այլն։ Վերջին երկու աշխատութիւնների համար նա ստացաւ մօտ 20,000 ֆրանկի առաջին մրցանակը։ Առհասարակ բազմաթիւ են նրա այն աշխատութիւնները, որոնք միայն մասնագէտներին կարող են հետաքրքրել։

Ի. Օպպերտը Ասորեստանեան գիտութեան հպարտ կոթողներից մէկն էր, որի անունը միշտ անմոռանալի կը մնայ։ Նա նորագոյն ժամանակի ամենամեծ ասորագէտն էր։

Հանգուցեալ գիտնականը մի և նոյն ժամանակ հետաքրքրվում էր և հայագիտութեամբ։ Նա էլ չէր ընդունում, որ Մովսէս Խորենացին 5-րդ դարու պատմիչ է։

Համբուրգի արևելագէտների միջազգային կօնգրէսում, երբ ես պատիւ էի ունեցել նրա հետ միասին հրաւիրվելու հայագէտ Լեհմանի մօտ ընթրիքի, հանգուցեալը կատակելով Մ. Խորենացու պատմութեանը ծաղրում էր, իբրև 5-րդ դարու գրված, որ նրա կարծիքով երբէք չէ կարող լինել։

Լ. Բաբայեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 օգոստոսի

ԲԵՐԼԻՆ, 17 օգոստոսի։ Եպօնացիների զիջումները բացատրվում է մասամբ և այն հանգամանքով, որ Օյեաման հաղորդել է Տոկիօ որ անհրաժեշտ է կամ հաշտութիւն կնքել կամ անմիջապէս յարձակվել բոլոր ոյժերով Լինեվիչի բանակի վրա, որ նորանոր օգնութիւններ է ստանում։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 17 օգոստոսի։ Ներկայումս այստեղ է գտնվում եապօնական ժողովրդական լուսաւորութեան անդամը, որ ուսումնասիրում է դանիական ուսումնարանական գործի դրութիւնը։

ԽԱՐԿՕՎ, 17 օգոստոսի։ Հաշտութեան կնքման լուրը ազգաբնակութեան մէջ ահագին ուրախութիւն է առաջացրել։ Կատարվեցին մասնաւոր կերպով մաղթանքներ։

ՎԻԼՆԱ, 17 օգոստոսի։ Բնակարան վարձողների թիւը, որոնք իրաւունք ունեն մասնակցելու Պետական Դումայի ընտրութիւններին, հիւսիս արևմտեան կողմի 6. նահանգներում հասնում է 1327 հոգու։

ՄՕՍԿՎԱ, 17 օգոստոսի։ Տեղիս մի քանի առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւններ հրաւէր են ստացել մասնակցելու Պետերբուրգում առաջիկայում բացվելիք կաշու և մորթու ցուցահանդէսին։ Հաշտութեան լուրը նպաստաւոր ազդեցութիւն ունեցաւ բորսայի վրա։

ՊԱՐԻԶ, 17 օգոստոսի։ «Journal»-ը ասում է, որ հաշտութեան կնքումը Ֆրանսիայում կը զարթեցնի բաւականութեան զգացմունք։ Լրագիրը շնորհաւորում է իր բարեկամ դաշնակից ազգին, որ նրան յաջողվեց վտանգից ազատվելու և կարծիք է յայտնում, որ եապօնական դիպլոմատների չափաւորութիւնը մեծ չափով նպաստեց բանակցութիւնների աջող հետևանքին։ «Matin»-ը ջերմ կերպով գովաբանում է Ռուզվէլտին և նրա անուանում է մեծ խաղաղարար։ «Petit Journal»-ը միևնոյն կարծիքն է արտայայտում։ «Humanite»-ն ասում է, որ մանաւանդ Ֆրանսիացիները պէտք է առանձնապէս ուրախանան հաշտութեան լուրի առթիվ, որովհետև դա մեզ ազատում է վերջին ժամանակի դժուար օրերից։ «Echo de Paris»-ն ողջունում է հաշտութեան կնքումը և աջողութիւնը վերագրում է Ռուզվէլտի ջանքերին և անգլո-եապօնական դաշնագրի խաղաղարար ազդեցութեան։ Միլանում և Հռոմում հաշտութիւն կնքումը անագին տպաւորութիւն թողեց։ Ենթադրում են, որ Եապոնիան մի ինչ որ անյայտ հաշիւ է ունեցել այդպէս անսպասելի կերպով զիջելու։ Ենթադրում են նաև ռուս-եապօնական մի դաշնակցութեան կնքման մասին։ Խօսում են նաև այն ազդեցութեան մասին, որ ունեցել են ամերիկական, ֆրանսիական և անգլիական բանկիրները իրանց միջամտութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 16 օգոստոսի։ «Neue Freie Presse» լրագրի մի հեռագիրը հաղորդում է, որ Կրէտէի վրա՝ Ադսիպօպուլոսի մօտ եղած վերջին կռուից յետոյ յունական կառավարութիւնը պետութիւններին կուղարկէ մի յայտագիր միջազգային զօրքը յունական զօրքով փոխարինելու մասին։

ՊՕՐՏՍՄՈՒՏ, 16 օգոստոսի։ Եապօնական լրագիրների թղթակիցները սաստիկ գոգված են արած զիջումի համար և պահանջում են, որ եապօնական լիազօրները իրանց կեանքին վերջ տան խարիկիրի միջոցով։ «Օսակա-Շինդուն»-ի թղթակիցը ասում է, որ եապօնական լիազօրները պետական դաւաճաններ են համարվում։ «Խաչկուչի»-ի թղթակցի կարծիքով հաշտութեան կնքումը փոքրոգութեան ապացոյց է։ Յաղթութիւնների շնորհիւ ղած բոլոր յաջողութիւնները, ահագին ծախսերը և զոհված մարդիկը, այդ բոլորը անօգուտ անցան։ Կօմուրան և Տակահիրան դաւաճաններ են և պէտք է մեռնեն,

որովհետև նրանք իրանց հայրենիքի անարժան ներկայացուցիչները հանդիսացան։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 18 օգոստոսի։ Ամերիկայում տրամադրությունը աննկարագրելի է։ Եապոնական լիազօրները վհատված հոգեկան տրամադրության մէջ են գտնվում։ Լիազօրների մէջ համաձայնությունը յայտարարված և ստորագրված է։ Վճռված է յանձնել ուսուցչապետ Մարտէնսին և Դէնիսօնին մշակել հաշտության արձանագրությունը ըստ կարելոյն կարճ ժամանակի ընթացքում։

18 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Շտաուս-սեկրետար Վիտտէի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան անունով. «Պորտսմուտ, 16 օգոստոսի, 1905 թ.» «Ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան, որ Եապոնիան ընդունել է Ձեր պահանջները հաշտության պայմանների վերաբերմամբ, որի հիման վրա խաղաղությունը կը վերահաստատվի, շնորհիւ Ձեր իմաստուն և հաստատ վճռի և Ձերդ Մեծութեան նախագծած ճշտությամբ։ Ռուսաստանը ճնում է Հեռաւոր Արևելքում մի մեծ պետություն, որպիսին եղել է մինչև այժմ և դարերով էլ կը մնայ։ Մենք Ձեր ցուցումների իրագործման համար գործադրեցինք մեր եռանդը և ռուսաց սիրտը։ Խնդրում ենք ողորմածաբար ներել, եթէ չենք կարողացել աւելին անելու։

Թագաւոր Կալսրը օգոստոսի 15-ին Բարձրագոյն հրամայեց ներկայ պատերազմի ընթացքում նշանաւոր թուով նաւերի կորստի և նաւատորմի սպանների անձնական կազմի պակաւելու պատճառով, ժամանակաւորապէս պակասացնել փոխ-ծովապետների թիւը 22-ից 16-ի, կօնտր-ծովապետների թիւը 35-ից 25-ի մինչև այն հանգամանքների վրա հասնելը, երբ շատերի սահմանած փոխ և կօնտր-ծովապետների թիւին վերադարձումը իրապէս անհրաժեշտ կը դառնայ։ Լրագրական տեղեկությունների և Պետերբուրգի վարչական շրջաններում պատող լուրերի համաձայն, մինիստրների կաբինէտի կազմելու հարցը, կատարելապէս պարզված էր դեռ Պետական Դումայի Պետերհոֆում քննության ժամանակ, որովհետև մինիստրների միացեալ և միատեղի գործունէությունը միայն կարող է ամբողջ պետական աշխատանքը ցանկալի մութեան հասցնել։ Պետական Դումայի ուղղված բոլոր օրինագծերը մինիստրների կաբինէտով են անցնելու և բոլոր հարցապնդումների բացատրությունները, որոնք կարող են լինել Պետական Դումայումը, կը տրվեն այդ կաբինէտի համաձայնությամբ։ Առաջին մինիստրի պաշտօնը ստանալու է Ս. Խ. Վիտտէն Պորտսմուտից վերադառնալուց յետոյ։ Ինչպէս հաղորդում են, Ռուսաստանը վճարում է միայն պատերազմական գերիների պահպանության և նրանց Ռուսաստան փոխարինելու համար եապոնացիների իրապէս ծախսած գումարի չափով, որը կը կազմէ 100 միլիոն բուբլուց փոքր ինչ աւելի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լրագրական տեղեկությունների համաձայն, առևտրական ծովագնացության և նաւահանգիստների գլխաւոր վարչությունը կարգադրել է անյապաղ պատրաստել Սայգոնում և Շանխայում գտնվող նաւերը ռուս գերիներին Հեռաւոր Արևելքից Ռուսաստան բերելու։ Որովհետև այդ նաւերի թիւը 14 է, որոնց մէջ կարող է տեղաւորվել 15—18 հազար հոգուց ոչ աւելի, դրա համար էլ վերոյիշեալ վարչությունը բանակցությունների մէջ է մտել ռուս մասնաւոր շոգենաւատէրերի հետ, որպէս զի դրանք էլ բերեն գերիների մի մասը։—Հաղորդում են, որ մօտ ապագայում Պետերբուրգից մի յատուկ յանձնաժողով՝ նախագահությամբ Պետական Խորհրդի անդամ Գարեմիկինի և մասնակցությամբ սենատոր Կրիվօշէյնի, մինչ տարի օդնական կուտէրի և ուրիշ անձինքների կը գնայ պարզաբանելու ագրարական շարժման բնաւորությունն աստիճանը, որը, ինչպէս զեկուցանում է տեղական ադմինիստրացիան, սպառնական չափեր է ընդունում։

ՊՕՐՏՍՄՈՒՏ, 18 օգոստոսի։ Հաշտության պայմանների մէջ ոչ մի գաղտնի յօդուած չէ լինելու։ Կանէկօն յայտնեց, որ պայմանագիրը բաւականացրել է Եապոնիային, որովհետև նա կուզում էր իր ապագայ գոյության համար։ Եապոնիան Ռուսաստանի հետ կը պահպանի սերտ յարաբերություններ։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 13 օգոստոսի։ Եապոնիայի լիազօրները մտադիր են սեպտեմբերի 7-ին մեկնելու Եապոնիա։ Սինդիկատ Մօրգան-Ջէյմս Բէկը քննում է ռուսական չորս հարիւր միլիոն ռուբլու փոխառության պայմանները։—Պրոֆէսսոր Մարտէնսը և Դիննիսէնը ձեռնարկել են կազմելու հաշտության արձանագրությունը։ Պայմանագիրը կանուանվի «Պորտսմուտի դաշնակցություն»։ Վիտտէն յոյս ունի մինչև իր մեկնելը խօսակցելու եապոնական ներկայացուցիչների հետ՝ վերականգնելու բարեկամական յարաբերությունները առևտրական շահերի տեսակէտից։

ԼՕՆԴՕՆ, 17 օգոստոսի։ «Դեյլի-Նիւսը» իր մի առաջնորդող մէջ անգլո-եապոնական միության վերաբերմամբ ասում է, որ «եթէ այդ նոր միությունը պէտք է ծառայէ իբրև մի թշնամական գործիք Ռուսաստանի վերաբերմամբ, որի համար պէտք է ծառայէ Եապոնիան, այդ դէպքում չենք կարող չասել, որ այդօրինակ կօմբինացիան զուրկ է բարոյական ոյժից։ Ամեն մի հակառուսական կօմբինացիա կարող է պատճառել մեզ ապագայում անթիւ դժբախտություններ»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսիքական հիւանդությունների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ, երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմենօվսկայա փ. № 20.
(և. հ. շ. կ.) 2—30

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեանց
Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, բնակարան Լալայեանցի բնակարան։

ԿԱՐՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
„ՓԵԹԱԿ“
ՕՐ. Մ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ
Աշակերտուհիների ընդունելությունը օգոստոսի 20-ից, առաւօտեան ժամը 9 ից մինչ 4-ը։ Ընդունվում են և գիշերօթիկ աշակերտուհիներ։ Ցանկացողները կարող են ստանալ ուսումնարանում մանրամասն ծրագիր ձրիաբար։ Архивный пер. д. № 4. (չ.ռ.կ.) 2—6

ԵՂ. Մ. և Ա. ԹԱՌԱՑԵԱՆՑՆԵՐԻ
գրավաճառանոցներում
1) Тифлисъ, Голов. просп. 2) Баку, пр. Парапета.
Ընդունվում են կօմիսիայով վաճառելու համար ամեն տեսակ գրքեր։ 10—10

Լոյս տեսաւ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆՑԻ
ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ և ՆԿԱՐԱԳՈՒԹԻՒՆ
տարրական դասընթաց
Առաջին մաս
Ստորին դասարանների համար.
Գինն է 20 կօպ։
Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցները։ Պահեստը հեղինակի մատ. հասցէն Ցումիաձնոր, Гарегинъ Левонянцъ. Въ Академіи. 4—10

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԷ
Եւ շուտով լոյս կը տեսնի
ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Պաւել Վինոգրադովի
Ա. տարի, հին դար։ Թարգմ. Խաժակի։

Թարգմանված է և շուտով տպագրության կը յանձնվի Կ. ԿԱՈՒՑԿՈՒ
«ԷՐՖՈՒՐՏԻ ԾՐԱԳԻՐԸ»
հեղինակի առաջաբանով հայերէն թարգմանության համար։
5—5 Բ. Իշխանեան

Նեկայ օգոստոսի 20 ին լոյս կը տեսնեն իմ հետևեալ աշխատությունները։
1) «Զեռնարկ կրօնական գիտելիքների Ա. տարի
2) » » » Բ. տարի
3) » » » Գ. տարի
4) Մի պատմ հայ մատուցի, հոգևորականների և ժողովրդի շուրջը։ Քահանայական ռոճիկի և կանոնադրության յաւելուածով, վաճառման արդիւնքի կէսը յատկացրած է բագուցիների և Երևանեան հայ արկածեալների օգտին։
5) Բարի Մայր Մարիամը—վէպիկ, նոյնպէս կէսը յօգուտ արկածեալների տարուոյս։
3—3 Արսէն աւ. քհ. Բագրատունի

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
Միուսուցիչեամի վարժուհի
Սաւուրօպոլի հայոց եկեղեցական ծխական մեդասեան, երկսեռ, վերաբացվող ուսումնարանի համար։ Պայմանների մասին տեղեկանալու համար դիմել և խնդիր ու ուսման վկայականը ուղարկել Губ. гор. Ставрополь ктитору армянской церкви Евагръ Аннеткову. 1—4

Բագուի ս. Լուսաւորիչ եկեղեցու համար ՀԱՐԿԱՒՈՐ են ձայներ, հայկական ձայնագրության և ժամերգության քաջ ծանօթ, հմուտ և փորձված ՏԻՐԱՑՈՒՆԵՐ։ Ցանկացողները իրանց պայմանների մասին կարող են դիմել գործակալին կամ երէց-փոխին։
Գործակալ՝ Զաւէն վարդապետ
Երէց-փոխ՝ Մինաս Կաճկաճեան
(ու. կ. ե.) 1—6

Լոյս տեսաւ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԷՄՍՏՎՕ
Ի. Բելոկոնսկու
Թարգմ. Կ. Զալալեանի։
Գինն է 15 կ. Ճանապարհածախքով 17 կոպ., գումարով գնողներին բաւարար զեղչով։
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ». 1—5

Երկու տարի է մի ԱՌԱՏ ՂՈՒՐԻ պատճառով իբր թէ կառավարությունը արգելում է, ուխտաւորները չեն գալիս
„ՎԱՐԴԻՀԷՐ“
ուխտատեղին. ուստի յայտարարում ենք, որ ցանկացողների համար ոչ մի արգելք չը կայ։ 1—1

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդությունների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գոլովինսկի պրոսպեկտի և Կաղետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղետսկի փողոցից № 2. (ա. օ.) 3—300

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ»
գրախանությունում վաճառվում է հետևեալ հրատարակությունները.
«Փորձ» ազգային և գրական ամսագիրը, առաջին տարի 10 ր., երկրորդ տարի 10 ր., երրորդ տարի 5 ր., չորրորդ տարի 3 ր., հինգերորդ տարի 2 ր.
Բանաստեղծություններ, Յովհ. Թումանեանի և պատկերով 3 ր.
Եղիշէի պատմությունն Վարդանանց ըստ անձևացեացն օրինակի 20 կ.
Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Լէօի 1 ր. 50 կ.
Ամառնային նամակներ, Շահազիզեանի 1—50
Հայի խնդիր, Պուշեանցի 1—50 կ.
Քրիստոնէության արշալուսին կամ պատկերներ Ներոնի ժամանակից, Ֆարրարի, թարգմ. ռուսերէնից Մխիթար վարդապետ 2—50 կ.
Ազատության մասին, Միլլի 1—20 կ.
Նոյի ագռաւը, Առաքելը, և Խորհրդաւոր միանձնուհի, Մուրացանի 1—50 կ.
Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և հայոց պատերազմի և քննադատությունը, Փորթուգալ փաշայի 3 ր.
Համով-հոտով, Սրուանձտեանի 1—25 կ.
Խաչատուր Աբեղայի Զուղայեցւոյ պատմություն պարսից, Բարգէն վարդապետ 1—25 կ.
Ոսկի բարեկամ հայ ընտանեաց, Գ. քահանայ Մանդակունի 5 ր.
Ցարություն, Տօլստոյի, թարգմ. Տ. Յովհաննիսեանցի 1—50 կ։
Մարդակազմություն, Մէլիք-Կարագեօզեանցի գինն է 60 կոպէկ։
Դիմել՝ Книжни магазинъ „Гуттенбергъ“, Г. Галустянцу. 3—3

ՈՒՆԵՆՔ «ՕՐԵՕԼ» և «ԲՐԱՌՈՒՆ»
գործարանների բամբակ մաքրող ամերիկական բազմաթիւ մեքենաներ (ջին) ամեն տեսակ չափերի, սեղմիչով (կօնդենսատօր) և մնուցիչով (պիտայնել) և առանց դրանց, նոյնպէս և ձեռքի ջիններ։
Պահանջի համար դիմել Երևան—Բարսեղ Եղիազարեանին։ 2—3

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Սոֆիա Ի. Գէլբօրտտ-Լօկշ
Տեղափոխվել է Կաղնաչէյսկի փողոց № 7, տուն իշխ. Թումանօվայի, Ալէքսանդրեան այգու դիմացը։ (կ.ե.հ.) 32—100

Տեղական ազգաբնակությունից Անդրկովկասում զեմստվային հաստատություններ ներմուծելու առիթով խորհուրդներ և ժողովներ կազմելու համար պատգամաւորներ ընտրելու հրահանգի II և V կէտի համաձայն և Թիֆլիսի պ. նահանգապետի օգոստոսի 9-ի № 363 առաջարկի համեմատ՝ Թիֆլիսի գաւառական ազնվականության պարագլխի պաշտօնակատար Ա. Մ. Սուվարտովը խնդրում է Թիֆլիսի գաւառի բոլոր մասնաւոր հողատէրերին, որոնք չեն պատկանում գիւղական համայնքների կազմին, նոյնպէս և առևտրական ու արդիւնաբերական հիմնարկությունների տէրերին, և այն գիւղացի սեփականատէրերին, որոնք բացի գիւղական հողաբաժնից՝ ունեն նաև գնված հողեր՝—շնորհ բերել ներկայ օգոստոսի 26-ին առաւօտեան ժամը 10-ին Թիֆլիսում Վրաց ազնվականության քարվանսարայում, Դվօրցովի փողոցում տեղի ունենալիք նախնական և ընտրողական ժողովներին՝—գաւառական խորհրդակցության համար պատգամաւորներ ընտրելու Անդրկովկասում զեմստվային հաստատություններ մտցնելու հարցի առիթով։ (19, 22, 25) 1—3

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ուլուխանլու-Զուլֆա երկաթուղային գծի շինության վարչությունը յայտարարում է ընդհանուրի գիտության համար, որ մարդատար և ապրանքատար գնացքների ժամանակաւոր բացումը Ուլուխանլու և Նախիջևան կայարանների միջև տեղի կունենայ այս օգոստոսի 20-ին։ Ուլուխանլուից Նախիջևան գնացքները կը գնան երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը. Նախիջևանից Ուլուխանլու կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը։ Առաջին մարդատար-ապրանքատար գնացքը դուրս կը գայ Ուլուխանլուից Նախիջևան ներկայ օգոստոսի 20-ին, իսկ Նախիջևանից Ուլուխանլու օգոստոսի 21-ին։ Գնացքների ցուցակը կը յայտարարվի առանձին։ (ա. օ.) 2—3

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Լազարեան Ճեմարանի արեւելեան լեզուաց, Մոսկուա.
Պես. խորհրդ. Դանիել Գաբրիելեան Քանանեանի մրցանակի Բարձրագոյն հաստատուած կանոնադրության 7. բորդ յօդուածի հիման վրա Լազարեան Ճեմարանի մասնագիտական Դասընթացների Խորհուրդը իւր՝ 1905 թ. Ապրիլի 5-ին կայացած նիստում վճռեց յայտարարել իր գիտության մասնագէտների առաջիկայ երկու նիւթը՝ երկու մրցանակի համար, իւրաքանչիւրը՝ 1000 բուբլի։
Ա.—Հայ գաղթականության պատմությունը հանդերձ իւրաքանչիւր գաղութի պատմական տեսությամբ՝ սկսած Հայ Արշակունիների անկումից մինչև մեր օրերը։
Բ.—Հայերի և Վրացիների քաղաքական և կուլտուրական փոխադարձ յարաբերությունները՝ հին ժամանակներից սկսած մինչև Վրաստանի միանալը Ռուսաստանի հետ։

Հետազօտությունները կարող են ներկայացուել Հայերէն կամ Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն։
Լաւագոյն հետազօտությունը յիշեալ իւրաքանչիւր նիւթի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից հազար (1000) բուբլի մրցանակով։
Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած հետազօտություններից երկուսը հաւասար արժողություն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ։
Հետազօտությունները պէտք է ներկայացուին ոչ ուշ քան 1-ն Սեպտեմբերի 1907 թ.։
Վերատեսուչ Ճեմարանի Վ. Միլլեր
Քարտուղար Խորհրդի Ա. Խախանով
3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լերմօնտօվսկայա փողոց, № 15)
Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթություն, Կովկասի ազնվականական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1.Ի8
Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսերն հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (ո) 11—12

Дозволено цензурою. Тифлисъ, 18-го августа 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկ. Электропечатная типографскаго „Т—ва «Гермесъ». Мад. ул. № 15.